**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N1**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Ք.Մեղրի** **24 նոյեմբերի 2017թ.**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99-րդ հոդվածների պահանջներով, համաձայն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի հունվարի 12-ի N5-Ա հրամանի, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզպետի 2017 թվականի փետրվարի 20-ի N29-Ա որոշումը, ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի աշխատանքային խմբի կողմից (խմբի ղեկավար ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Ս.Ավետիսյան) ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ՏԻՄ-երի լիազորությունների նկատմամբ 2017 թվականի նոյեմբերի 24-ին իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն հետևյալ բնագավառներում՝

տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում, ոստիկանության հետ աշխատանք, պաշտպանություն, արտակարգ իրավիճակներ, քաղաքաշինություն, առողջապահություն, բնապահպանություն, կրթություն, հողօգտագործում, ընդերքօգտագործում, առևտուր և ծառայություններ, տրանսպորտ և կապ, սոցիալական պաշտպանություն, քաղաքացիական կացության ակտերի գրանցում, մշակույթ, ֆիզիկական կուլտուրա և սպորտ:

1. Իրավական և մասնագիտական հսկողության ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը՝ կից հավելվածով ներկայացված հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետներում չկատարելու դեպքում, Մեղրի համայնքի ՏԻՄ-երի՝ դրանց հետ կապված գործողությունները կամ անգործությունը կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Մեղրի համայնքի ղեկավարը իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական ու մասնագիտական հսկողությունն իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել:

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Սյունիքի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Մեղրի համայնքի ղեկավարին:

**ՀՀ Սյունիքի մարզի համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի ղեկավար՝**

**Ս.Ավետիսյան**

**ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ղեկավար՝**

**Մ. Զաքարյան**

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքում իրականացված
իրավական և մասնագիտական հսկողության
արդյունքների ամփոփման վերաբերյալ
24 նոյեմբերի 2017թ N1 արձանագրության

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

## Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների իրականացում

| Դրույթների անվանումը | Թերի է պահպանված | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| Համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն: | Թերի է պահպանված | Խախտվել է "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով սահմանված պահանջը, համաձայն որի՝ համայնքի ավագանին հաստատում է համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը: 2016 թվականի սեպտեմբերի 18-ին համայնքի խոշորացումից հետո նախկին 13 համայնքներին պատկանող գույքն անցել է Մեղրի խոշորացված համայնքին, սակայն առ այսօր չի ընդունվել համայնքի ավագանու համապատասխան որոշում՝ գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին | Առաջարկվում է կատարել գույքագրում և համայնքի ավագանու նիստում հաստատել համայնքի սեփականության գույքի ցանկը | Սկսել անմիջապես |

Կրթություն

| Դրույթների անվանումը | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերցման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| Նախադպրոցական հաստատության ղեկավար աշխատողների ընտրությունը, նշանակումը և պաշտոնից ազատում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշների համապատասխան: | Պահպանված չէ | «Ագարակի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրենի նշանակման դեպքում խախտվել է ՀՀ կրթության եւ գիտության նախարարի 2011 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության նախադպրոցական ուսումնական հաստատությունների ղեկավար եւ մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը հաստատելու մասին» N416-Ն հրամանով հաստատված հավելվածի «II. Նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենը» վերնագրի 3-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված որակավորման պահանջը, համաձայն որի՝ նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոն զբաղեցնողը պետք է ունենա բարձրագույն կրթություն (բակալավր, դիպլոմավորված մասնագետ, մագիստրոս): | Առաջարկվում է օրենսդրությամբ սահմանված կարգով վերացնել խախտումը | Անհապաղ |

**Քաղաքաշինության բնագավառ**

(հսկողության ժամանակաշրջանը՝ 23.09.2016 – 24.11.2017թթ)

| Դրույթների անվանումը | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| Կառուցապատման նպատակով հողամասերը տրամադրվում են հաստատված ծրագրային | Պահպանված չէ Համայնքի ղեկավարի 07.08.2017թ N 453 | Փոխվել է հողի գործառնական նշանակությունը, | Առաջարկվում է գործընթացը համապատասխանեցնել ՀՀ կառավարության | 3 ամիս |

| | | | | |
|---|---|---|---|---|
| փաստաթղթերով սահմանված նպատակային և գործառնական նշանակությանը և միջոցառումների առաջնահերթությանը համապատասխան | որոշումով 125 1 քմ հողամասը Ագարակ քաղաքի Չարենցի թիվ 8/21 հասցեում առանց լիազոր մրմնի հետ համաձայնեցման բնակավայրի ընդհանուր օգտագործման հողը փոխվել է խառը կառուցապատման | խախտվել է ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշման կարգի 15 րդ կետի 3-րդ ենթակետի ա. կետի պահանջները | 2011 թվականի դեկտեմբերի 29 ի N 1920 Ն որոշման կարգի 15-րդ կետի 3 րդ ենթակետի ա կետի պահանջներին | |
| ՃՀԱ-ում նշված է օբյեկտի ռիսկայնության աստիճանը /կատեգորիան/ և դրան համապատասխան պահանջվող փորձաքննության /կան հեղինակի երաշխավորագրի/ անհրաժեշտության պահանջը | Պահպանված չէ հետևյալ ՃՀԱ-ների մասով<br>ՃՀԱ N 5 19.04.2017թ<br>ՃՀԱ N 6 27.04.2017թ<br>ՃՀԱ N 7 20.07.2017թ<br>ՃՀԱ N 11 29.08.2017թ | Չի նշվել օբյեկտի ռիսկայնության աստիճանը<br>Խախտվել է ՀՀ կառավարության 19 03.2015թ N 596 Ն որոշման ձև N 1-2 ձևաթղթի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման ձև N 1-2 ձևաթղթի պահանջները | Այսուհետ բացառել նմանատիպ խախտումները· |

| Դրույթների անվանումը | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունները և հրապարակված քաղաքաշինական ծրագրերը ու նախագծերը քննարկվում են և որոշումների ընդունմանը մասնակցում են հասարակայնության ներկայացուցիչները (համաձայնությամբ) | Պահպանված չէ <Գրին Փաուեր>ՍՊԸ կողմից ներկայացված <Փոքր հիդրոէլեկտրոկայանի շենքի կառուցման, երթակայան, գլխամասային հանգույց և ճնշումային խողովակաշար> բարձր ռիսկայնության աստիճանի( IV կատեգորիայի) օբյեկտի նախագծի համար,որի | Խախտվել է ՀՀ կառավարության 28.11.1998թ N 660 որոշման պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 28.11 1998թ N 660 որոշման պահանջները - | Այսուհետ բացառել նմանատիպ խախտումները |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համար համայքի կողմից տրվել է 2ին. թույլ N 2 25,04,2017թ | | | |

| Դրույթների անվանումը | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| Համաձայնեցված ճարտարապետա-շինարարական նախագծերը համապատասխանում են ՃՀԱ ում նշված դրույթներին և ՀՀ օրենսդրությամբ ճարտ-շին. նախագծերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին | Պահպանված չէ 2ին. թույլ N 2 25,04,2017թ մասով | Օբյեկտը բարձր ռիսկայնության աստիճանի է (IV կատեգորիա) նախագծի փորձաքննությունը պետք լիներ համալիր փորձաքննություն, սակայն այն պարզ փորձաքննությամբ է Խախտվել է ՀՀ կառավարության 19.03 2015թ N 596-Ն որոշման հավելված 2-ի 13 կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19 03.2015թ N 596-Ն որոշման հավելված 2 ի 13 կետի պահանջները | Այսուհետ բացառել նմանատիպ խախտումները: |
| Համաձայնեցված ճարտարապետա շինարարական նախագծերի վերաբերյալ առկա է ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության /ների/ դրական եզրակացությունը կամ II կատեգորիայի օբյեկտների համար՝ հեղինակի երաշխավորագիրը | Թերի է պահպանված 2ին. թույլ N 9 26,10,2017թ մասով | Շին թույլտվությունում չի նշվել երաշխավորագրի ամիսը, ամսաթիվը և համարը Խախտվել է ՀՀ կառավարության | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03 2015թ N 596-Ն որոշման ձև N 2 3 ձևաթղթի պահանջները | Այսուհետ բացառել նմանատիպ խախտումները. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | 19.03.2015թ N 596 Ն որոշման ձև N 2-3 ձևաթղթի պահանջները | | |
| ՀՀ օրենսդրությամբ սահմանված 3-օրյա ժամկետում թույլտվության պատճենները ներկայացվում են ՀՀ ՔՆ քաղաքաշինական պետական տեսչություն և ՀՀ ԿԱ հարկային ծառայության համապատասխան տարածքային տեսչություն: | Պահպանված չէ շին. թույլ N 2 25,04,2017թ մասով - | Տեղի է ունեցել ժամկետի խախտում Խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման որոշման 122 –րդ կետի պահանջները | Այսուհետ բացառել նմանատիպ խախտումները. |
| 3-օրյա ժամկետում շինարարության (քանդման) թույլտվություն տրամադրելու վերաբերյալ իրազեկվում է ՀՀ համապատասխան մարզպետը՝ | Պահպանված չէ շին. թույլ N 2 25,04,2017թ մասով | Տեղի է ունեցել ժամկետի խախտում Խախտվել է ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման 122 –րդ կետի պահանջները | Առաջարկվում է պահպանել ՀՀ կառավարության 19.03.2015թ N 596-Ն որոշման որոշման 122 –րդ կետի պահանջները | Այսուհետ բացառել նմանատիպ խախտումները: |

| Դրույթների անվանումը | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|
| Շինարարության շահագործման ակտը ձևակերպելուց հետո 3-օրյա ժամկետում ծանուցվում է համապատասխան մարզպետը (կցվում է շահագործման ակտի պատճենը) | Պահպանված չէ հետևյալ ավ. ակտ (շ.թ) N 4 13,07,2017թ<br><br>ավ. ակտ (շ թ) N 5 14,08,2017թ մասով | Տեղի է ունեցել ժամկետի խախտում խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 163-րդ կետի պահանջները | Առաջարկվում է այսուհետ բացառել նմանատիպ խախտումները | Այսուհետ բացառել նմանատիպ խախտումները. |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Շինարարության շահագործման ակտը ձևակերպելուց հետո 3-օրյա ժամկետում ծանուցվում է տեսչության տարածքային բաժինը (կցվում է շահագործման ակտի պատճենը) | Պահպանված չէ հետևյալ ավ ակտ (շ.թ) N 4 13.07.2017թ<br><br>ավ ակտ (շ.թ) N 5 14.08.2017թ մասով | Տեղի է ունեցել ժամկետի խախտում խախտվել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման 163-րդ կետի պահանջները | Առաջարկվում է այսուհետ բացառել նմանատիպ խախտումները | Այսուհետ բացառել նմանատիպ խախտումները: |

| **Դրույթների անվանումը** | **Պահպանված չէ** | **Հայտնաբերված խախտումները** | **Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ** | **Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները** |
|---|---|---|---|---|
| Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի պահպանումն իրականացնելու նպատակով, օրենքով սահմանված կարգով, համայնքի ավագանու կողմից հաստատված պարտադիր նորմերի շրջանակներում իրականացվող աշխատանքների համար անհրաժեշտ վճարների չափեր<br>*(ՏԻՄ օրենք, 42-րդ հոդված, 1-ին մաս, կետ 21).* | Պահպանված չէ | Վճարների չափեր չեն սահմանված, խախտվել է ՏԻՄ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջը: Չնայած դրան, համայնքը օժանդակում է բնակիչներին՝ առանձին աշխատանքների իրականացման գործում: | Առաջարկվում է միջոցներ ձեռնարկել օրենսդրության պահանջն ապահովելու ուղղությամբ և սահմանել վճարների չափեր. | Եռամսյա ժամկետում |

| Դրույթների անվանումը | Թերի է Պահպանված | Պահպանված չէ | Հայտնաբերված խախտումները | Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ | Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները |
|---|---|---|---|---|---|
| Թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանի վարումը և գերեզմանի վկայականի տրամադրումը (ՀՀ կառավարության 2006թ նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N1, կետ 9) | X | Պահպանված չէ | Չի վարվում գերեզմանատեղերի գրանցման մատյանը և գերեզմանի վկայականի տրամադրում չի կատարվում: Խախտվել է ՀՀ կառավարության 2006-11-23 N1910-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 9-րդ կետի պահանջը, համաձայն որի գերեզմանատան տնօրինությունը մահվան վկայականի հիման վրա համապատասխան գրանցում է կատարում թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանում և հուղարկավորության կազմակերպումն ստանձնողին տալիս է գերեզմանի վկայական | Առաջարկվում է ապահովել բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը | Եռամսյա ժամկետում |
| Գերեզմանատների մուտքի մոտ գերեզմանատան հատակագծի և գերեզմանատնից օգտվելու կանոնների տեղադրումը և գերեզմանատների | Թերի է պահպանված | X | Ապահովված է գերեզմանատների տարածքի մաքրությունը, սակայն գերեզմանատների մուտքերի մոտ տեղադրված չեն գերեզմանատան | Առաջարկվում է գերեզմանատների հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները տեղադրել մուտքերի մոտ | Եռամսյա ժամկետում |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| տարածքի մաքրության պահպանումն ու աղբահանության կազմակերպումը (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N1910-Ն որոշում, հավելված N4, կետ 15,16) | | | հատակագիծը և գերեզմանատնից օգտվելու կանոնները | | |
| Վճարովի հիմունքներով տրամադրվող գերեզմանների հողատարածքի արժեքների սահմանումը գոտու (ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշում հավելված N7, կետ 8 | | Պահպանված չէ | Համայնքը վճարովի գերեզմանի համար հողատարածք չի հատկացրել: Չեն սահմանվել նաև գերեզմանների հողատարածքի արժեքները՝ ըստ գոտիականության գործակցի: Խախտվել է ՀՀ կառավարության 2006-11-23 N1910-Ն որոշմամբ հաստատված N7 հավելվածի 8-րդ կետի պահանջը, համաձայն որի համայնքի ղեկավարը, ըստ տվյալ գոտու համար սահմանված տարածագնահատման գոտիականության գործակցի կայացնում է որոշում՝ ընտանեկան գերեզմանի համար տրամադրվող վճարովի հիմունքներով հատկացվող հողատարածքի արժեքի չափի մասին | Առաջարկվում է, սահմանված կարգով ապահովել վճարովի հիմունքներով հատկացվող ընտանեկան գերեզմանի հատկացվող հողատարածքի արժեքի չափի որոշումը՝ ըստ տվյալ գոտու համար սահմանված տարածագնահատման գոտիականության գործակցի: | Եռամսյա ժամկետում |